

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 28

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի ՆԻՍՏԻ

*ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ*

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին՝ Ն. Անդրեասյանը, Տ. Գալստյանը, Ա. Զաքարյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Հունանյանը, Ն. Պետրոսյանը, Ա. Սարգսյանը, Ս. Շուխյանը, Վ. Մկրտչյանը:

Նիստին մասնակցում էին նաև՝ համայնքի ղեկավարի տեղակալներ՝ Վ. Սաֆարյանը, Գ. Եղիազարյանը, աշխատակազմի բաժինների պետեր Ա. Մնացականյանը, Շ. Վահանյանը:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

- Աշտարակ համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:  
*/Զեկուցող՝ Շ. Վահանյան/*
- Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:  
*/Զեկուցող՝ Շ. Վահանյան/*
- Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:  
*/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*
- Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:  
*/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*
- Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:  
*/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*
- Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու և աճուրդ-վաճառքով օտարելու մասին:  
*/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*

**/1/ Օրակարգը հաստատվել է 9 - ԿՈՂՄ ձայներ ստանալով:**

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - Աշտարակ համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին

Ձեկուցումով հանդես եկավ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շ. Վահանյանը և առաջարկեց փոփոխություն կատարել համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեում:

Ձեկուցողը նշեց, որ առաջարկվող փոփոխության նպատակը օգուտոս ամսին Արցախի Հանրապետությունում կայանալիք համահայկական խաղերին պատշաճ մասնակցություն ապահովելու համար է:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանը:

**9 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Ց Ի Ն - 3 - Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տրամադրելու մասին

Հարցը ներկայացրեց ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը և առաջարկեց գույքահարկի և հողի հարկի գծով հարկային արտոնություն տրամադրել Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի:

Ձեկուցողը նշեց, որ արտոնությունները տրամադրվում են տույժերի մի մասով՝ մայր գումարները վճարելուց հետո:

Հարցի վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանը, ինչպես նաև ելույթներ ունեցան Կ. Շահագիզյանը, Ա. Սարգսյանը, Վ. Մկրտչյանը:

**9 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Լ Ս Ե Ց Ի Ն - 4 - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տրամադրելու մասին

Ձեկուցումով հանդես եկավ համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց թույլատրել համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության որոշ հողամասեր, որոնց իրադրության հատակագծերը կցված են որոշման նախագծին, աճուրդ-վաճառքի միջոցով օտարել, միաժամանակ սահմանել մեկնարկային գին:

Ձեկուցողին հարցեր ուղղեց Տ. Գալստյանը, որոնց Ա. Մնացականյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**8 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

**Տ. Գալստյանը չի մասնակցել քվեարկությանը:**

Լ Ս Ե Յ Ի Ն - 5 - Հայաստանի Հանրապետության Աշխարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց թույլատրել համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր, որոնց իրադրության հատակագծերը կցված են նախագծին, կառուցապատման իրավունքով քաղաքացիներին տրամադրելու:

Զեկուցողը նշեց, որ հարցն, ըստ էության, բաղկացած է երկու մասից՝ առաջինը վերաբերվում է նրան, որ մի շարք քաղաքացիներ դիմում են ներկայացրել և հաշվի առնելով, որ հողատարածքները չեն գերազանցում 20քմ, ուստի նրանց հետ պայմանագիր է կնքվելու առանց մրցույթի, իսկ մնացած հողատարածքների տրամադրումը կատարվելու է մրցութային կարգով:

Զեկուցողին հարցեր ուղղեց Կ. Շահազիզյանը, որոնց Ա. Մնացականյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

**S. Գալստյանը չի մասնակցել քվեարկությանը:**

Լ Ս Ե Յ Ի Ն - 6 - Հայաստանի Հանրապետության Աշխարակի համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին

Հաջորդ հարցը ևս ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց թույլատրել համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության յոթ միավոր հողամասերը, որոնց իրադրության հատակագծերը կցված են նախագծին, օտարել աճուրդ-վաճառքով, միաժամանակ սահմանել նաև մեկնարկային գին:

Զեկուցողը նշեց, որ հարցի հինգերորդ կետում առկա է տեխնիկական վրիպակ, որը որոշման մեջ արդեն իսկ ուղղված կլինի:

Զեկուցողին հարցեր ուղղեցին և ելույթներով հանդես եկան Կ. Շահազիզյանը, Տ. Գալստյանը, Ա. Սարգսյանը:

Բարձրացված հարցերին սպառիչ պատասխաններ տրվեցին համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Ա. Մնացականյանի կողմից:

**8 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

**S. Գալստյանը չի մասնակցել քվեարկությանը:**

Լ Ս Ե Յ Ի Ն - 7 - Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված բնակավայրերի նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

Օրակարգային վերջին հարցը ևս ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց համաձայնություն տալ համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, սակայն

որպես քաղաքացու սեփականություն փոխանցված որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու և աճուրդ-վաճառքով օտարելուն:

Զեկուցողին հարցեր ուղղեցին և ելույթներով հանդես եկան Ա. Սարգսյանը, Տ. Գալստյանը, Կ. Շահազիզյանը:

Բարձրացված հարցերին սպառիչ պատասխաններ տրվեցին համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Ա. Մնացականյանի կողմից:

**9 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:**

Օրակարգի հարցերը սպառված են:

Օրակարգային հարցերի ավարտից հետո համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը համայնքի ավագանու անդամներին տեղեկացրեց, որ Աշտարակի համայնքապետարան է դիմել Մանկական զարգացման հիմնադրամը անվճար հիմունքներով 5000քմ տարածքի տրամադրման խնդրանքով՝ այնտեղ առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար զարգացման կենտրոն կառուցելու նպատակով:

Համայնքի ղեկավարը նշեց, որ ծրագիրն ուսումնասիրել է, այն բավականին լուրջ է, իսկ տարածքի հետ կապված առավել հստակ տեղեկատվության դեպքում, այն որպես օրակագային հարց կներկայացվի համայնքի ավագանու քննարկմանը:

Ավագանու անդամներն իրենց համաձայնությունը հայտնեցին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2019 թվականի հունիսի 21-ին:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

**ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

**ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ**

**ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ**

**ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ**

**ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ**

**ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ**

**ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

**ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն**

**ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝**

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ**